ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 647-Ա « 23 » ապրիլի 2026թ.

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 78-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի 2026 թվականի հունվարի 14-ի հ. 161-Ա որոշման 8-րդ հավելվածը (աղյուսակ 1), ինչպես նաև հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության պետի 2026 թվականի փետրվարի 17-ի հ. Ն/9066-26 զեկուցագիրը.

1. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ-գլխավոր ֆինանսիստին՝ Երևան քաղաքի 2026 թվականի բյուջեով, Երևանի քաղաքապետարանի (առանց Երևանի վարչական շրջանների) մասով բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 08 բաժնի, 02 խմբի, 04 դասի «Մշակութային միջոցառումների իրականացում» ծրագրով և տնտեսագիտական դասակարգման 4639 «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» հոդվածով նախատեսված գումարներից «Համո Սահյանի հիշատակը հավերժացնող հուշարձանի համար հայտարարված մրցույթի արդյունքներով հաղթող ճանաչված հեղինակի՝ ««Մուրադյան Տիգրան Զավենի» ԱՁ-ին» հատկացնել 24675.0 հազար (քսանչորս միլիոն վեց հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ՝ հուշարձանի պատրաստման համար ֆինանսական աջակցություն ցուցաբերելու նպատակով, որը Երևան քաղաքի ավագանու 09.09.2014թ. հ.203-Ա որոշման համաձայն՝ նախատեսվում է տեղադրել Օղակաձև զբոսայգու 5-րդ հատվածում գտնվող շատրվանների հարակից տարածքում:

2. Լիազորել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության պետին՝ կնքել դրամաշնորհի պայմանագիր:

3. Սույն կարգադրության կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության պետի վրա:

4. Կարգադրության կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետի տեղակալ Լ. Հովհաննիսյանի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ